

մեր 1122 թուին:

Ձեռքովս գրեցի սիրալիր ողջոյնը ի հաստատութիւն այս նամակին:

Կնքուած՝ Յիսուսի Քրիստոսի ծառայ Յակոբ Կաթողիկոս ամենայն Հայոց, ի թուին 1104» (17):

Ոսկան վարդապետ՝ այս նամակէն օգտուելու ժամանակ չ'ունենար: Ս. Գրիգոր Նարեկացիի աղօթմատեանը հրատարակելի ետ, 1674ին, Մարտիրոյ մէջ կը կնքէ իր մահկանացուն, հայ տպագրիչներու սերունդ մը պատրաստելէ ետք:

Ժամանակակից Ֆրանսացի մատենագիր մը կ'ըսէ. «Ոսկան վախճանեցաւ Մարտիրոյ մէջ, ուր առանձնացած էր թոյլտուութեամբ Թագաւորին, հայերէն գրքեր տպագրելու համար, ի պէսս իր Ազգին: Հռոմի Հաւատքի Տարածման Ժողովը կազմող ծիրանաւորները զարմացած էին որ դիւրութեամբ արտօնութիւն տրուած է իրեն ամէն տեսակ հայերէն գրքեր տպելու. վասն զի կրնար այնպիսի գրքեր ալ հրատարակել, որ պատճառ ըլլային Հայոց բաժանումը ծաւալելու: Սակայն Ոսկանի վարժունքը՝ Ֆրանսայի մէջ իր բնակութեան ամբողջ տեւողութեան ընթացքին, մեծարանքով լի եղաւ հանդէպ Հռոմի Եկեղեցւոյն» (18):

(17) Archivio. . Աճդ, fol. 288:

(18) Զարբհանգէլեան, Աճդ, 252: